1000 խոշոր հարկատուների կողմից 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 1,32 տրլն դրամ, ինչը միայն 4 տոկոսով է բարձր նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): Համեմատության համար նշենք, որ 2023-ին աճը 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելի քան 17 տոկոս էր: Ըստ էության, այստեղ ևս նկատելի է հարկային մուտքերի աճի դանդաղման միտումը:



Գծապատկեր 1. Հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, 10 խոշորագույն հարկատուների վճարած հարկերի ծավալը ավելացել է շուրջ 50 մլրդ դրամով կամ 19 տոկոսով, իսկ 50 և 100 խոշորագույնների պարագայում ցուցանիշը աճ է արձանագրել 60 մլրդ դրամով՝ համապատասխանաբար 11 և 8 տոկոսով (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հունվար-սեպտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2023-ի համեմատությամբ որևէ փոփոխություն չի արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել են մոտ 26 մլրդ դրամ՝ նույնքան էլ 2023թ. մակարդակն էր (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2024թ. 9 ամիսների համար կազմել է 30 անգամ, ինչը փոքր-ինչ բարձր է նախորդ տարվա համեմատ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2024-ին 133 անգամ է, ինչը նախորդ տարվա համեմատ էլ ավելի բարձր է (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 235 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2023-ին այդպիսի հարկատուների թիվը 241 էր, 2022-ին՝ 188, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ: Նույն կերպ, 2024-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով, 490 հարկատուի հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 480 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

Վերջին երկու տարիներին խոշոր հարկատուների ցանկում բացակայում են 200 մլն դրամից պակաս հարկային վճարումներ կատարող հարկատուները: Մինչդեռ

2022թ. ցանկում առկա էր 62, իսկ 2021-ին՝ 262 այդպիսի հարկատու, իսկ, օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ շուրջ 400 (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2023 և 2024թթ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետք էր վճարել շուրջ 244 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ 2022-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 187 մլն դրամը, իսկ 2021-ին՝ 142 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2024-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 179 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 170 էր, իսկ 2022-ին՝ 135: Նույն կերպ, 269 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվքանակը ավելացել է 37-ով (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի փոփոխությունը՝ նախորդ տարվա համեմատ: 2024թ. հունվար-սեպտեմբերին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 35,7%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը մեկ տոկոսային կետով ցածր էր (գծապատկեր 7):

Միևնույն ժամանակ, 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 33,8%-ը ուղղակի հարկերն են ինչը ցածր է նախորդ տարվա 35,1% մակարդակից:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2024թ. առաջին 9 ամիսների արդյունքներով, 88 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 79 էր, իսկ 2022-ին՝ 61:

2024թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 673 ընկերություններ, 2023-ին հանրապետությունում գործել է 603 այդպիսի կազմակերպություն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2024թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը, մլրդ դրամ	4.2	4.7	4.3	4.7	6.5	7.1	7.7
Շահութահարկ, մլն դրամ	701	875	656	606	971	1404	1402
Եկամտային հարկ, մլն դրամ	631	807	763	798	826	1100	1206
ԱԱՀ, մլրդ դրամ	1.6	1.87	1.8	1.95	2.36	2.8	2.9
Ակցիզային հարկ, մլն դրամ	500	628	661	541	640	736	812

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով վճարել է 7,7 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 7,1 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,4 մլրդ դրամ (2023-ին՝ նույնչափ), եկամտային հարկը՝ 1,2 մլրդ դրամ (2023-ին՝ 1,1 մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 2,9 մլրդ դրամ (2023-ին՝ 2,8 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 812 մլն դրամ (2023-ին՝ 736 մլն դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2021	2022	2023	2024
Ընդամենը	104.0	128.0	121.0	150.0	197.0	257	257
Շահութահարկ	14	19	18	16	21	29	37
Եկամտային հարկ	27	38	32	39	57	64	58
ԱԱՀ	50	60	60	73	88	110	123
Ակցիզային հարկ	2.9	2.8	3.7	6.7	2.8	0.5	1.7

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. առաջին 9 ամիսների արդյունքներով վճարել է մոտ 260 մլն դրամի հարկ, նույնքան, ինչ նախորդ տարի, շահութահարկը՝ 37 մլն դրամ (2023-ին՝ 29 մլն դրամ), եկամտային հարկը՝ 58 մլն դրամ (2023-ին՝ 64 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 123 մլն դրամ (2023-ին՝ 110 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 82%-ն է, ինչը

նախորդ տարվա համեմատությամբ փոքր-ինչ աճել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին կազմել է 81,3%, ինչը 0,7 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա մակարդակից (գծապատկեր 9):



Գծապատկեր 9.Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2023-2024թթ. ընթացքում: Ընտրված թվով 100 կազմակերպությունների 60 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Ընդ որում, 2023-ին 2022-ի համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում չորսը ներկայացնում էին ֆինանսաբանկային հատվածը, իսկ այս տարի աճի առաջատարների տասնյակում միայն մեկ բանկ է (Յունիբանկ՝ +3,7 մլրդ դրամ):

Նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի աճի ցուցանիշով առաջատար են Զանգեզուրի ՊՄԿ-ն՝ +31,3 մլրդ դրամ, ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹԸ՝ +19 մլրդ դրամ, ԳՐանդ Տոբակոն՝ + 8,8 մլրդ դրամ, Ագարակի ՊՄԿ-ն՝ +5,8 մլրդ դրամ, Սոֆթ Կոնստրակտը՝ +5,2 մլրդ դրամ, Դիջիթեյնը՝ +5,1 մլրդ դրամ: :

Ցանկի առաջին հարյուրյակի ընկերությունների 1/3-ը նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալը աճել է առնվազն 1 մլրդ դրամով: Նախորդ տարի առաջին հարյուրյակի կեսն էր այդպիսին:

Դիտարկվող ընկերությունների շարքում 16 հարկատու նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ պակաս է վճարել 1 մլրդ և ավելի դրամի չափով հարկ

(նախորդ տարի կար 8 այդպիսի ընկերություն): Այս ցուցիչով առաջին շարքում է ԱՐԴՇԻՆԲԱՆԿը՝ -13,2 մլրդ դրամ, ԻՄԷՄ ԱՐՄԵՆԻԱ ընկերությունը՝ -3,8 մլրդ դրամ, Տոյոտա Երևան ընկերությունը՝ -3,2 մլրդ դրամ, Յուքոմը՝ -3,2 մլրդ դրամ, Գազպրոմ ԱՐՄԵՆԻԱՆ՝ -3,2 մլրդ դրամ:

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2023	2024	Տարբերությունը
1	ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	52.4	83.7	31.3
2	ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ	30.1	49.1	19.0
3	ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ	31	39.8	8.8
4	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ	39.5	36.3	-3.2
5	ՓՐԻԹԻ ՈՒԵՅ	23.4	28.0	4.6
6	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	22.8	20.4	-2.4
7	ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ	16.6	17.6	1.0
8	ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ	13.6	14.7	1.1
9	ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ	12.6	14.5	1.9
10	ՍԻԹԻ	10.8	13.9	3.1
11	ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ	8.7	13.9	5.2
12	ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ	15.7	13.5	-2.2
13	ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ	14	12.7	-1.3
14	ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	11.2	12.3	1.1
15	ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ	12.5	11.6	-0.9
16	ՖԼԵՇ	12.2	11.1	-1.1
17	ԱԿԲԱ ԲԱՆԿ	10.9	10.9	0.0
18	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ	8.5	10.2	1.7
19	ԻՆԵԿՈԲԱՆԿ	8.6	9.5	0.9
20	ԴԻՋԻԹԵՅՆ	4.3	9.4	5.1
21	ՄԱՔՍ ՕԻԼ	8.2	9.0	0.8
22	ԿԱԲԱՐԿՈ	5.5	8.6	3.1
23	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	2.3	8.1	5.8
24	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	21.3	8.1	-13.2
25	ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ	8.7	8.1	-0.6
26	ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ	6.9	8.0	1.1
27	ՅՈՒՆԻԲԱՆԿ	3	6.7	3.7
28	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	6.7	6.7	0.0
29	ՅՈՒՔՈՄ	9.7	6.5	-3.2
30	ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ	6.2	6.4	0.2
31	ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ	5.1	6.0	0.9
32	ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ	6.9	6.0	-0.9
33	ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ	5.9	5.9	0.0
34	ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ	5.4	5.8	0.4

35	ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ	5	5.6	0.6
36	ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ	3.9	5.5	1.6
37	ՄԵԳԱ ԹՐԵՅԴ	7	5.5	-1.5
38	ԱԹԵՆՔ	3.7	5.4	1.7
39	Այդի Բանկ	5.4	5.3	-0.1
40	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ	4.4	5.3	0.9
41	ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ	4.1	5.1	1.0
42	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	4.9	5.0	0.1
43	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	4.6	4.9	0.3
44	ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ	5.5	4.7	-0.8
45	ԱՆԴԱԿՈ	4.6	4.7	0.1
46	ԷՎՈԿԱԲԱՆԿ	7.3	4.7	-2.6
47	ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ	4.2	4.6	0.4
48	ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ	7.8	4.6	-3.2
49	ԲԱՐՍԻՍ	4.4	4.5	0.1
50	ՕՆԻՐԱ ՔԼԱԲ	5.4	4.4	-1.0
51	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	3	4.4	1.4
52	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	4.8	4.4	-0.4
53	ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ ՏՐԱՆՍԳԱԶ	3.9	4.3	0.4
54	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	3.6	4.2	0.6
55	ԹԵՂՈՒՏ	3.2	4.1	0.9
56	ՆԵՎԻՍ	3.7	4.0	0.3
57	ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ	3.3	3.8	0.5
58	ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	4.7	3.8	-0.9
59	ՍԱՍ-ԳՐՈՒՊ	4.2	3.8	-0.4
60	ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ	3.5	3.8	0.3
61	ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ	4.9	3.7	-1.2
62	ԹԵԼ-ՍԵԼ	4.1	3.7	-0.4
63	ՍԼԱՎ ԳՐՈՒՊ	3.7	3.6	-0.1
64	ԱԳ ԻՄՊԵՔՍ	3.7	3.6	-0.1
65	ԿԵՀ ԱՐՄԵՆԻԱ	3.5	3.5	0.0
66	ԴԵՐԺԱՎԱ-Ս	3.4	3.5	0.1
67	ՖԱՍԹ ԲԱՆԿ	2.7	3.4	0.7
68	ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ	2.5	3.4	0.9
69	ԱՐԿԱԹ	2.7	3.4	0.7
70	ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ փակ բաժնետիրական ընկերություն	1	3.3	2.3
71	ՌԳ ԳՐՈՒՊ		3.2	3.2
72	ՆՈՐ ՁՈՎՔ	5.2	3.2	-2.0
73	ՀԱՅՓՈՍՏ	1.7	3.1	1.4
74	ՎԵԴԻ-ԱԼԿՈ	1	3.1	2.1
75	ԱԴԱՄԻՈՒՄ	2.9	3.1	0.2
76	ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ	2	3.1	1.1
77	ԱՍԿԵ ԳՐՈՒՊ	4.5	3.1	-1.4
78	ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ	3	3.0	0.0

79	ԲԱԼՉՈՒԳ ԿԱՊԻՏԱԼ		3.0	3.0
80	ՍՊԱՅԿԱ	3.4	2.9	-0.5
81	ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄԶ	3.7	2.9	-0.8
82	ԼԵՔՍ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ	1.6	2.8	1.2
83	ԱԷՐՈՖԼՈՏ- ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ	2.3	2.8	0.5
84	ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	1.6	2.8	1.2
85	ԲԱՂՐԱՄՅԱՆ	4.6	2.8	-1.8
86	ԱՐՄԲՐՈԿ	2.9	2.7	-0.2
87	Կուբ Ինվեսթ ՓԲԸ	0.5	2.7	2.2
88	ԲԱԳԱՐԻՈ ԳՈԼԴ		2.7	2.7
89	ԸԼԱՅՆ ԹԵՔՆՈԼՈՋԻ	2	2.6	0.6
90	Ա ՏՈԲԱԿԿՈ ՔՈՄՓԱՆԻ		2.6	2.6
91	Դ ԵՎ Ս ՔՈՆՍԹՐԱՔՇՆ	1.4	2.6	1.2
92	ՊԵՌՆՈ ՌԻԿԱՐ ԱՐՄԵՆԻԱ	2.6	2.5	-0.1
93	ՋԵՐՄՈՒԿ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼՊԵՊՍԻ-ԿՈԼԱ ԲՈԹԼԵՐ	1.9	2.5	0.6
94	ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ	2.6	2.5	-0.1
95	ԷՖՖԵԿՏ ԳՐՈՒՊ	2.3	2.5	0.2
96	ԱՐԹ ՎԱՅՆ		2.5	2.5
97	ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ	2.4	2.5	0.1
98	ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ	6.2	2.4	-3.8
99	ԴԱՅՄՆԴ ՍՏԱՆԴԱՐՏ		2.4	2.4
100	ՍԵՐՎԻՍԹԱՅԹԱՆ ԱՐԵՎԵԼՔ	2.3	2.4	0.1

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 1,32 տրլն դրամ, ինչը միայն 4 տոկոսով է բարձր նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: 2023-ին աճը 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելի քան 17 տոկոս էր: Ըստ էության, այստեղ ևս նկատելի է հարկային մուտքերի աճի դանդաղման միտումը:
- ✓ շուրջ 60 մլրդ դրամով կամ 8 տոկոսով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների պարագայում,

- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 772 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ ավելի է 60 մլրդ դրամով,
- ✓ ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2024թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել են մոտ 26 մլրդ դրամ՝ նույնքան էլ 2023թ. մակարդակն էր,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2023թ. 9 ամիսների համար կազմել է 30 անգամ, ինչը փոքր-ինչ բարձր է նախորդ տարվա համեմատ,
- ✓ 2024թ. հունվար-սեպտեմբերի արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործող 235 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2023-ին այդպիսի հարկատուների թիվը 241 էր, 2022-ին՝ 188, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ,
  - 490 հարկատուի հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 480 էր,
  - Վերջին երկու տարիներին խոշոր հարկատուների ցանկում բացակայում են 200 մլն դրամից պակաս հարկային վճարումներ կատարող հարկատուները: Մինչդեռ 2022թ. ցանկում առկա էր 62, իսկ 2021-ին՝ 262 այդպիսի հարկատու, իսկ, օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ շուրջ 400,
  - 179 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 170 էր, իսկ 2022-ին՝ 135,
  - 269 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 37-ով,
  - 2024թ. հունվար-սեպտեմբերին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 35,7%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը մեկ տոկոսային կետով ցածր էր,
  - 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 673 ընկերություններ, 2023-ին հանրապետությունում գործել է 603 այդպիսի կազմակերպություն:

- ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով վճարել է 7,7 մլրդ դրամի հարկ (2023-ին՝ 7,1 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,4 մլրդ դրամ (2023-ին՝ նույնչափ), եկամտային հարկը՝ 1,2 մլրդ դրամ (2023-ին՝ 1,1 մլրդ դրամ), ԱԱՀ-ն՝ 2,9 մլրդ դրամ (2023-ին՝ 2,8 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 812 մլն դրամ (2023-ին՝ 736 մլն դրամ):
- ✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2024թ. առաջին 9 ամիսների արդյունքներով վճարել է մոտ 260 մլն դրամի հարկ, նույնքան, ինչ նախորդ տարի, շահութահարկը՝ 37 մլն դրամ (2023-ին՝ 29 մլն դրամ), եկամտային հարկը՝ 58 մլն դրամ (2023-ին՝ 64 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 123 մլն դրամ (2023-ին՝ 110 մլն դրամ):
- ✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 82%-ն է, ինչը նախորդ տարվա համեմատությամբ փոքր-ինչ աճել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2024-ին կազմել է 81,3%, ինչը 0,7 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա մակարդակից:
- ✓ Առաջին հարյուրյակի հարկատուների 60 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը :
- ✓ 2023-ին 2022-ի համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում չորսը ներկայացնում էին ֆինանսաբանկային հատվածը, իսկ այս տարի աճի առաջատարների տասնյակում միայն մեկ բանկ է (Յունիբանկ՝ +3,7 մլրդ դրամ):
- ✓ Նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի աճի ցուցանիշով առաջատար են Զանգեզուրի ՊՄԿ-ն՝ +31,3 մլրդ դրամ, ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹԸ՝ +19 մլրդ դրամ, ԳՐանդ Տոբակոն՝ + 8,8 մլրդ դրամ, Ագարակի ՊՄԿ-ն՝ +5,8 մլրդ դրամ, Սոֆթ Կոնստրակտը՝ +5,2 մլրդ դրամ, Դիջիթեյնը՝ +5,1 մլրդ դրամ:
- ✓ Ցանկի առաջին հարյուրյակի ընկերությունների 1/3-ը նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալը աճել է առնվազն 1 մլրդ դրամով: Նախորդ տարի առաջին հարյուրյակի կեսն էր այդպիսին:
- ✓ Դիտարկվող ընկերությունների շարքում 16 հարկատու նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ պակաս է վճարել 1 մլրդ և ավելի դրամի չափով հարկ (նախորդ տարի կար 8 այդպիսի ընկերություն): Այս ցուցիչով առաջին շարքում է ԱՐդշինբանկը՝ -13,2 մլրդ դրամ, ԻՄԷՄ ԱՐմենիա ընկերությունը՝ -3,8 մլրդ դրամ, Տոյոտա Երևան ընկերությունը՝ -3,2 մլրդ դրամ, Յուքոմը՝ -3,2 մլրդ դրամ, Գազպրոմ ԱՐմենիան՝ -3,2 մլրդ դրամ: